ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՏՐԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ
№ 2/08

Քաղ. Երևան 30 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. հունվարի 30-ի նիստում (արձանագրություն № 57/2) քննարկեց «Bartoldi Group SA» (LU) ընկերության (այսուհետ նաև՝ բողոքարկող) 2007թ. դեկտեմբերի 26-ի բողոքը՝ IR 872751 «CHRONOGRAPHE SUISSE CIE» համակցված ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում տարածելը մերժելու մասին նախնական մերժման մասին որոշումը անփոփոխ թողնելու մասին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի 2007թ. հոկտեմբերի 03-ի կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2007թ. հոկտեմբերի 03-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ IR 872751 «CHRONOGRAPHE SUISSE CIE» համակցված ապրանքային նշանը ԱԾՄԴ 03, 08, 09, 14, 16, 18, 20 և 25-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար միջազգային գրանցման գործողությունը տարածելը մերժելու մասին նախնական մերժման մասին 2007թ. հունվար 18-ի իր որոշումը թողել է անփոփոխ՝ սպառողին արտադրողի մասին մոլորության մեջ գցող տեղեկություններ պարունակելու պատճառով, հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 13.1-րդ և 90.20-րդ կետերը, քանի որ լյուքսեմբուրգյան կազմակերպության կողմից գրանցման է ներկայացվել Շվեյցարիա պետության անունը պարունակող նշան:

Սակայն բողոքարկողը համաձայն չէ այդ որոշմանը և բողոքարկման խորհրդի քննարկման է ներկայացնում հետևյալ փաստարկները:

Բողոքարկողը նշում է, որ հայտարկված ապրանքային նշանում առկա «Suisse» բառը աշխարագրական անվանում չէ, այն կոչված է անվանելու ժամանակագրիչների տեսակը, այսինքն «CHRONOGRAPHE SUISSE»-«Շվեյցարական ժամանակագրիչ» նշանակում է ժամանակագրիչ սարք, որն

արտադրված է Շվեյցարական տեխնոլոգիայով: Այսպես, «CHRONOGRAPHE SUISSE CIE» ժամացույցները բաղկացած են «Suisse ETA» մեխանիզմներից, որոնք հագեցված են Duboize-Depraz լրացուցիչ թիթեղներով: Այս բոլոր մեխանիզմների անվանումներում «Suisse» բառը նշանակում է, որ դրանք անցել են հատուկ ստուգում և մեխանիզմների հենց այդ տեսակը անվանվել է Շվեյցարական համաձայն ՕՍՄ օրենքի՝ ժամացույցների համար «Շվեյցարական» տերմինը կիրառելու օրենքի, դրույթների: Բողոքողը հայտնել է նաև, որ ժամացուցների/ժամանակագրիչների «Շվեյցարական» լինելու փաստը հաստատելու համար ստեղծված է հատուկ կազմակերպություն՝ Suiss Watch Maker Federation-Շվեյցարական ժամացույցներ Արտադրողների Դաշնություն, որի անդամ են դառնում ՕՍՄ օրենքի դրույթներին համապատասխանելու դեպքում: «CHRONOGRAPHE SUISSE CIE» նշանով մակնշված ժամացուցները/ժամանակագրիչները համապատասխանում են ՕՍՄ օրենքի դրույթներին, իսկ ապրանքային նշանը օգտագործողը հանդիսանում է Շվեյցարական ժամացույցներ Արտադրողների Դաշնության անդամ:

Բողոքարկողը նշել է նաև, որ «CHRONOGRAPHE SUISSE CIE» նշանով մակնշված արտադրանքը արտադրվում է և արտադրվելու է Շվեյցարիայում: Ինչպես նաև նշել է, որ «CHRONOGRAPHE SUISSE CIE» նշանը գրանցվել է մի շարք երկրներում, որոնցից են՝ Կորեան, Իռլանդիան, Մեծ Բրիտանիան, Դանիան, Թուրքիան,Ավստրալիան:

Այսպիսով, բերելով իր փաստարկները, բողոքարկողը խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և պահպանություն ընձեռել «CHRONOGRAPHE SUISSE CIE» ապրանքային նշանի IR 872751 միջազգային գրանցմանը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի կողմից բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Bartoldi Group SA» (LU) ընկերության բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառներով, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն «Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաև այն նշանները, որոնք հանդիսանում կամ պարունակում են՝ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի կամ արտադրողի մասին.»: Հայտարկված նշանով մակնշված արտադրանքի մեջ Շվեյցարական տեխնոլոգիայի կիրառումը և Շվեյցարական որևէ կազմակերպության անդամ լինելը չի կարող հիմք հանդիսանալ Լյուքսեմբուրգյան կազմակերպության կողմից արտադրված արտադրանքը Շվեյցարական համարելու համար, ավելին Ապրանքային Նշանների Միջազգային Հիմնապաշարից (ROMARIN) քաղվածքի համաձայն հայտարկված ապրանքային նշանի միջազգային գրանցման տարածումը մերժվել է հենց Շվեյցարիայի կողմից, ակնհայտ է, որ Շվեյցարիա պետության անվանումը ապրանքային նշանի մեջ օգտագործելը սպառողներին մոլորության մեջ կգցի արտադրանի հարցում:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության

գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «բ» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Bartoldi Group SA» (LU) ընկերության 2007թ. դեկտեմբերի 26-ի բողոքը և IR 872751 «CHRONOGRAPHE SUISSE CIE» համակցված ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում տարածելը մերժելու մասին նախնական մերժման մասին որոշումը անփոփոխ թողնելու մասին 2007թ. հոկտեմբերի 03-ի կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան